№ 71 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 23 **1894** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 23 № 71

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և ազգ օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գաւառի զարգացումը։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Սովեալների օգտին. Նամակ Կիէվից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Եւրոպական հասարակաց կարծիքը Կարսի մասվան առիթով։ Տեղեկութիւններ Թիւրքաց Հայաստանից. Նամակ Թիւրքիայից. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Օրվայ խնդրի վերջաբանը։

ԳԱՒԱՌԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

—

Մեր մտաւոր և բարոյական կեանքը առհասարակ շատ դանդաղ է զարգանում, բայց մանաւանդ նա թոյլ է մեր գաւառներում։ Ամբողջ շարք գիւղեր, ամբողջ շրջաններ կարծես ոչ մի տեղեկութիւն չունեն այն մտաւոր շարժման մասին, որ տեղի ունի մեր մեծ քաղաքներում։ Նոյն իսկ մեր գաւառական քաղաքներից և աւաններից շատերում, ուր և դպրոցներ կան, և մի քանի ուրիշ հաստատութիւններ, կեանքը մեռած է։ Ճիշդ է, յաճախ տեսնում էք, թէ ինչպէս մէկը նստած մի լրագիր է կարդում, մի ուրիշը իր համար մի վէպ է քրքրում, երրորդը անգիր է անում մի երգ և ոգևորվում նրանով, բայց և այնպէս մտաւոր կեանք չը կայ, մարդկանց մէջ շփում չը կայ, և իրրև դրա հետևանք՝ բացակայ է մտաւոր շարժում հասարակութեան մէջ։

Մեր գաւառական ինտելիգենցիային պատկանող անձինք, պէտք է խոստովանել, մի քանի տեղ փորձեր են արել աւելի ներգործական դեր կատարելու.—նրանք մտել են ժողովրդի մէջ, յարաբերութիւններ են ստեղծել այն տարրերի հետ, որոնք ընդունակ են առաջ դնալու. բայց այդպիսի փորձերի թիւը քիչ է և կարճատև։

Աւելի յաճախ մեր գաւառական ինտելիգենտը իրան պահում է կղզեացած, կապեր չէ հաստատում ժողովրդի դանդաղ խաւերի հետ և մնում է օտար այն շրջանին, ուր նա բնակութիւն ունի։ Եթէ նա դանում է մի երկու անձն, որոնք համահաւասար կրթութիւն ունեն, նրանց հետ ժամանակ է անցկացնում, խօսում է զանազան խնդիրների մասին, յայտնում է իր կարծիքը լրագրական վէճի, կուսակցական մի կուսի մասին և բաւականանում է հեռուից հեռու իր համակրութիւնը արտայայտելով դէպի այս կամ այն երևոյթը։ Իսկ շրջապատող կեանքը մնում է առանց ուշադրութեան, առանց այն բանի, որ նա էլ դառնայ մտաւոր շարժման համար մի ասպարէզ։

Շատ անգամ պատահում էք գիւղում մի ուսուցչի։ Դուք դիմում էք նրան, իբրև հասկացող, բանիմաց մարդու և փորձ էք անում գիւղի, գիւղացու, հողի, անտեսութեան, գիւղական կարգերի, օրվայ հոգսերի, նոյն իսկ տարվայ հունձի մասին և ոչ մի պատասխան չէք ստանում։ Ուսուցիչը, ինչպէս մտել է գիւղը, այնպէս էլ մինչև այդ օրը անծանօթ է մնացել գիւղին և նրա բոլոր հանգամանքներին։ Խօսելով գիւղացու մասին, այդ ինտելիգենտը ասում է, որ գիւղացին ագէտ է, որ նրա անտեսութիւնը նահապետական է, նրա ամբողջ կեանքը ծիսակատարական, նրա հասկացողութիւնը կաշկանդված է. բայց քննութիւնը ցոյց է տալիս, որ այդ վկայութիւնը վայրիվերոյ է, որ գիւղական ուսուցիչը, գիւղի այդ ինտելիգենտը, ամենևին ծանօթ չէ գիւղի կեանքին, նրա պահանջներին։

Ինտելիգենտը ապրել է գիւղում և անտեղեակ մնացել նրա բոլոր հոգսերի ու ցաւերի մասին։ Նա խուլ կերպով լսել է, որ գիւղացիները ինչ որ մի մեծ հողային վէճ ունեն. նոյնպէս լսել է, որ տանուտէրի կամ նրա օգնականի ընտրութիւնները երկպառակութեան տեղիք են տուել. նրա ականջին հասել է, որ գիւղի անասունները ինչ որ մի հիւանդութիւնից կոտորվում են, որ գիւղացիները ջրի համար մեծ վէճ ունեն հարևան հողատէրերի հետ, մի քանի թիւրիմացութիւններ են ծագել անտառապահի ու գիւղացիների մէջ. բայց այդ բոլորը անորոշ, հեռուից հեռու, վայրիվերոյ, հարևանցօրէն։

Եթէ ինտելիգենտը մտնէր գիւղական կեանքի մէջ, նա շատ շուտ կը նկատէր, որ այդ նահապետական, անզարգացած կեանքի մէջ երևան են եկել շատ կարևոր կենսական խնդիրներ, որոնց քննութիւնը և ուսումնասիրութիւնը պահանջում են ինտելիգենտից շատ մեծ աշխատանք և լուրջ մտաւոր պատրաստութիւն, և որոնց մասին չէ կարելի հեղնաբար խօսել, իբրև անզարգացած մարդկանց անշարժ կեանքի երևոյթների մասին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

—

Ստացանք Թիւրքաց Հայաստանի, Երևանի ու Կարսի նահանդների սովեալների օգտին.

1) Պարսկաստանի Ռաշտ քաղաքից, Բ. Սողոմոնեանի միջոցով, 100 ր., հանգանակված այնտեղի հայերի մէջ. հանգանակութիւնը շարունակվում է։

2) Կախից, անյայտ ումից, 4 ռուբլի։

Ուրեմն նախկին 437 ռուբլի 69 կոպէկ հետ այժմ ունենք ընդամենը 541 ռուբլի 69 կոպէկ։

Այսօր, յունիսի 23-ին, ուղարկեցինք.

1) Ալէքսանդրոպոլ, Բարեգործական ընկերութեան ճիւղին 100 ռուբլի։

1) Կարս, Բարեգործական ընկերութեան ճիւղին, գաղթականների համար 100 ր.։

Մեզ մօտ մնաց 341 ռուբլի 69 կոպ։

Ուրեմն մինչև այժմ ստացել ենք 6672 ռուբլի 54 կ.։ Ուղարկել ենք 6331 ռուբլի։

ՆԱՄԱԿ ԿԻԷՎԻՑ

—

Յունիսի 10-ին

Մօտ օրերս առիթ ունեցանք Կիէվում լինելու։ Դժուար է մի կարճ թղթակցութեան մէջ ամփոփել Կիէվի մեզ վրա գործած տպաւորութիւնը։ Քաղաքը անպայման գեղեցիկ է մեր Թիֆլիսից թէ իր դիրքով և թէ իր շինութիւնների կողմից։ Նա շինված է մի խիստ ալիքաւոր տափարակի վրա. այդ տափարակը, եթէ կարելի է այսպէս ասել, դոյացնում է շատ անգամ կատարեալ մեծ բլուրներ, նոյն իսկ սարեր։ Գեղեցիկ է Կիէվը մանաւանդ իր արևելեան մասում. այդտեղ լայն Դնէպրը, իր լայնարձակ հորիզոնով, շրջվում է քաղաքի ամենաբարձր բլուրներին, որոնց վերևում գտնվում են այդիները և հասարակական ճեմելիքները։ Քաղաքի ամենալաւ փողոցը, Կրէչաթիկը, նոյն իսկ իր հոյակապութեամբ յիշեցնում է Պետերբուրգի Նէվսկին։ Անցնելով Կրէչաթիկով, երեկոյեան ժամը 9-ին կամ 10-ին,—դուք նոյն իսկ մոռանում էք, որ գտնվում էք գաւառական քաղաքում և ոչ թէ մայրաքաղաքում։ Այդտեղ դուք լսում էք կառքերի և տրամվայների երթևեկութիւնից առաջացած նոյն դղրդոցը, տեսնում էք նոյն պայծառ էլեկտրական լուսաւորութիւնը, նոյն հոյակապ մագազինները, վերջապէս սում էինք ժողովրդի գիտակցութեան և խաւարամիտների յուսահատութեան մասին,—վախկոտները ասում էին մեզ. «Իսկ եթէ յանկարծ յաղթութիւնը նրանք տանեն, յետոյ...»

Յանկարծ. ինչ կը նշանակի յանկարծ. միթէ ժողովրդական մի անդին ընտրութիւն, որի մէջ մասնակցում են 23 եկեղեցի, հազարաւոր ծուխերով, հասարակութեան բոլոր շրջանների ներկայութեամբ, կարող է ենթակայ լինել յանկարծ բառին։

Երբէք. ով ճանաչում է Թիֆլիսի ժողովրդին, ով գիտէ, թէ ինչ մտքեր և ինչ զգացմունքներ են գրգռվում մեր ժողովրդի զանազան շրջանները, ով, վերջապէս, ընդունակութիւն ունի նկատելու նրա խորին ատելութիւնը և արհամարհանքը դէպի խաւարամիտների բանակը, որը կտրված ժողովրդից, ուզում է խաղեր խաղալ նոյն այդ ժողովրդի գլխին,—նա մի բօպէ անգամ չէր կարող կասկածել, որ կիրակի օրվայ ընտրութիւնները կը վերջանան ամենափառաւոր յաղթանակով, մեր՝ առաջադիմական կուսակցութեան համար։

Դա մի պատահական աջողութիւն չէ և ոչ էլ մի անսպասելի դէպք, այլ մի գիտակցական շարժում, որ պատրաստվել է տարիների ընթացքում...

Դա ժողովրդի ձայնն է։ Ժողովուրդ, գիտէք ինչ այժ է դա։ Մի այժ, որ երբէք չէ ընկճվում, երբէք չէ կաշառվում, երբէք ինքն իրան չէ դաւաճանում։

—

Եւ ճշմարիտ։

Հրահանգներ մշակեցին, աշխատեցին ժողովրդի իրաւունքները սահմանափակել, սպառնալիքներ կարդացին, բոլոր քահանաներին ոտի կանգնեցրին, այդ բաւական չէ, աշխատեցին գրգռել ժողովրդին և հաւատացնել, որ մեր կուսակցութիւնը եկեղեցու քանդող է, ազգի թշնամի, դա-

---

ների հին սովորութիւնն է. այդ մեզ չէ զարմացնում։

Բայց վիճել թւերի դէմ,—դա մի նոր քաջագործութիւն է, որ մենք այդ եզու

նոյն 4—5 յարկանի գեղեցիկ տները, ինչ որ Պետերբուրգում։ Մի բան, ինչ որ մասամբ փչացնում է տպաւորութեան ամբողջութիւնը,—դա այն է, որ 4—5 յարկանի տների կողքին յանկարծ բարձրանում է 2 և նոյն իսկ 1 յարկանի տուն։ Բայց միւս կողմից Կիէվը կարող է հպարտանալ Պետերբուրգի առաջ իր հարուստ բուսականութեամբ, որի մէջ բանաստեղծօրէն ընկղմված է քաղաքը։

Լրագրական կողմից Կիէվը աղքատ է. չը հաշուելով պաշտօնական «Ցեղեկատուները», այդտեղ ընդամենը 3 հատ լրագիր է հրատարակվում, որոնցից մէկի հրատարակիչը պէտք է որ հայ լինի. գոնէ այդ երևում է նրա Մանուկով ազգանունից։ Կիէվը աղքատ է լրագիրներով ոչ թէ միայն թւի կողմից, այլ և նրանց բովանդակութեամբ. գոնէ «Кіевлянинъ» և Жизнь и Искусство» (որը այս տարվանից է հրատարակվում) մեզ վրա գործեցին նոյն տպաւորութիւնը, ինչ որ Ռուսաստանում հրատարակվող միւս հարիւրաւոր թերթերը։ Կարդալով նրանց, դուք զգում էք, որ հրատարակիչները ամեն ջանք են գործ դրել, որքան կարելի է հետաքրքիր դարձնել իրանց թերթերը և ուրիշ ոչինչ, իսկ առաջնորդող սկզբունք, որոշ տենդենցիա, չատից-քչից ղեկավարող յատկութիւններ—դուք չէք գտնի նրանց մէջ։ Դրանք կարծէք անհոգ հասարակութեան համար հրատարակվող անհոգ թերթեր լինեն, որոնք բոպէին ծառայելուց յետոյ՝ իրանց բոլոր պարտաւորութիւնները լրացած են գտնում։

Կիէվում մեր ուշադրութիւնը գրաւեց մի նոր տեսակի խոհանոց. արտաքին կողմից նա շատ նմանում է մինչև այժմ գոյութիւն ունեցող կէրոսինային խոհանոցներին, բայց չնվազքով ուրիշ տեսակի է։ Այդ նոր խոհանոցը այրվում է առանց պատրոյգի և, որ նշանաւորն է, նրա կէրոսինը այրվում է ոչ թէ հեղուկի ձևով, այլ նախապէս գազի վերափոխված։ Կրակը կարելի է ըստ ցանկութեան մեծացնել առանձին նասոսի միջնորդութեամբ, որը դրված է «խոհանոցի» ներքևում և փոքրացնել՝ առանձին վինտի միջոցով։ Շատ յարմար է հեռը մանածելու համար. քաշով ընդամենը $1\frac{1}{2}$ ֆունտ է և դիրքով փոքր։ Բռնկվել երբէք կարող չէ, որովհետև արտաքին օդը հաղորդվում է խոհանոցի կէրոսինի հետ միմիայն ամենափոքր ասեղի մեծութիւն ունեցող ծակի միջոցով, որտեղից և դուրս է գալիս չոզիացած կէրոսինը այրվելու ժամանակ։ Այդ նոր ապարատը, «պրիմուս» կոչումով, այնպիսի ուժգին կրակ է արձակում, որ 6 րօպէում հեշտութեամբ կարելի է բիֆշտեկս պատրաստել, 3 րօպէում կաթ եփ տալ և կէս ժամում սուպ եփել։ Եւ որ նշանաւորն է՝ այդ ժամանակ գործ դրվող կէրոսինի քանակութիւնը շատ քիչ է. 1 ֆունտ կէրոսինը բաւականութիւն է տալիս ամբողջ 6 ժամ անընդհատ։ Աւելացրէք դրա վրա և այն հանգամանքը, որ այդ ապարատը չէ ծխոտում այրելիս, հոտ և անհաճոյ տաքութիւն չէ արձակում և դուք կը համաձայնվէք, որ այդ «պրիմուսը» փոքրիկ տնտեսութեան մէջ անփոխարինելի գործիք է։ Գինն է 8 ր. 50 կ.։ Գնի կողմից էլ առանձնապէս թանդ չէ։

Ղ.

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, յունիսի 17-ին

Ղզլարից, «Մշակի» խմբագրութեանն ուղղած նամակը ստորագրողներից մէկն էլ ես լինելով՝ չեմ կարող առանց ուշադրութեան թողնել այդ առիթով «Արձագանքի» № 68-ում լոյս տեսած Ց. Լ.-ի հայհոյական նամակը։

Մարդ զարմանում է այն անպատկառութեան ու աներես ինքնավստահութեան վրա, որով յիշեալ պարոնը, որ քաջութիւն էլ չունի ամբողջ ազգանունով հրապարակ գալու, հաւատացնում է ընթերցողներին, թէ այդ նամակը ստորագրողները բոլորն էլ տգէտ մարդիկ են։

Ահա ճշմարտութիւնը. ստորագրողներից հինգը Ներսիսեան դպրոցն աւարտած են, որոնցից երկուսը կրթված, յարգված քահանաներ են, իսկ երկուսը ուսուցիչներ. մէկը Լազարեան ճեմարանի հինգերորդ դասարանից է և երեսուն տարվայ ուսուցիչ, մէկը համալսարանական, մնացած չորսը բոլորն էլ միջնակարգ կրթութիւն ունեն ըստացած, որոնցից երկուսը աւարտել են Ղզլարի դպրոցը այն ժամանակ, երբ նա թեմական չորս դասարանական էր, իսկ միւս երկուսը բլալական ուսումնարանի բարձր դասարաններից են։ Եթէ այդպիսիներն էլ տգէտ են, էլ ուսում առածները ովքեր են։ Արդ, այս բոլորից յետոյ, միթէ կեղծիք, ստախօսութիւն և ափեղծիկեղծութիւններ չեն Ղզլարում շատ տխուր հոչակ ունեցող այդ Ց. Լ.-ի խօսքերը։

Ցիրաւի զարմանալի է, որ մի այդպիսի անկեղծ սրտից բղխած նամակի դէմ հրապարակ է դուրս գալիս պարոնի պէս մի ողորմելի անձնաւորութիւն, որը դեռ յանդգնում է ամենանամիտ եզրակացութիւններ դուրս բերել, թէ մենք՝ ստորագրողներս, այդ նամակով Խրիմեանի դէմ ցոյց ենք ուզեցել անել։ Ո՞ւմն էք մոլորեցնում, պարոն։ Մենք չնորհակալութիւն ենք յայտնում Արիստակէս եպիսկոպոսին, որ նա իր գործունէութեամբ և իր գրուածքով դէմ է տգէտների ձեռնադրութեան և սիմոնականութեան, իսկ դուք օր ցերեկով համարձակութիւն ունէք ասելու, թէ դրանով մենք Խրիմեանի հակառակ ենք գործում։ Միթէ Խրիմեան կողմնակից է տգէտների ձեռնադրութեան և սիմոնականութեան։ Դա առնուազն «առջի ծառայութիւն» է, որ դուք ուզում էք մատուցանել Վեհափառին։

Ի դէպ. ինչ էք կամենում ասել՝ Ղզլարը փըտած ճահիճ անուանելով. միթէ այդ փտած ճահճի մէջ չէք ծնվել և սնվել դուք, և միթէ մօտիկ անցեալում չէր, որ դուք ձեզ պատիւ համարեցիք այդ փտած ճահճի quasi պատգամաւոր ներկայանալ Կաթողիկոսին, միմիայն Ղզլարի երկու «տուզերի» ձայներով ընտրված լինելով։

Բայց այսքանն էլ շատ է ձեզ համար։

Կոս. Գիւլնազարեանց

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Էջմիածին, յունիսի 17-ին

Ըստ պատուիրանի Վեհափառ Հայրապետի ազգիս՝ Դիւանս յայտնէ ձեզ՝ թէ առաքեալն ի խմբագրութենէ «Մշակ» լրագրի 100 ռուբլի դրամն ստացեալ է Նորին Վեհափառութիւն, օրհնելով զնուիրատուս իւրով հայրապետական օրհնութեամբ։

Դիւանապետիր՝ Խորէն ծ. վարդ. Ստեփանէ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Այսօրվանից «Մշակը» տպագրվում է 2,100 օրինակ։

—

Յունիսի 21-ին, երեքշաբթի օր, Թիֆլիսի կաթոլիկ եկեղեցում կատարվեց Ֆրանսիական հանրապետութեան նախագահ Կարնոի համար հոգեհանդէս։ Ժողովրդի ահագին բազմութիւն լցրել էր թէ եկեղեցին, թէ եկեղեցու բակը։ Հոգեհանդէսին ներկայ էին Կովկասի կառավարչապետ գեներալ-ադիւտանտ Շերեմետևի, նրա օգնական՝ կոմս Տատիշչեվ, Թիֆլիսի նահանգապետը և այլ բարձրաստիճան անձինք։ Եկեղեցում, դիակալի վրա, դրված էին մի քանի պսակներ՝ Թիֆլիսի Ֆրանսիական կոլոնիայից և ուրիշներից։ Հոգեհանդէսին երգեցիկ խումբը երգում էր Տրուֆիի ղեկավարութեան տակ։

—

«Արարատ» ամսագրի վերջին համարում տպագրված են ուսումնական յանձնաժողովի որոշումները։ Ցանկալի է, որ այդ սովորութիւնը տեղական լինի։ Ցանկալով սահման դնել գրական գողութեանը, որ վերջին ժամանակներս շատ տարածված է, յանձնաժողովը որոշել է միմիայն այն դասագրքերը մտցնել ցուցակի մէջ, որոնց յառաջաբանի մէջ յիշված կը լինեն աղբիւրները։

—

Թիֆլիսի Առևտրական բանկի խորհուրդը յունիս-21-ի նիստում, նոյն բանկի Բաթումի բաժնի կառավարիչ ընտրեց պ. Խրիստաֆոր Վէրմիշովին։

—

Մենք արդէն ծանօթացրինք Թիֆլիսի նահանգապետ իշխան Շերվաշիձէի այն նախագծի հետ, որը առաջարկված է ներքին գործերի մինիստրութեանը, և որ վերաբերում է գիւղական ազգաբնակութեան տնտեսական բարւոքմանը Թիֆլիսի նահանգում։ Ներկայումս մայրաքաղաքի մամուլը, քննելով այդ նախագիծը, ասում է, որ դա վերաբերում է ամբողջ պետութեանը և այնքան հետաքրքիր է, որ առանձին ուշադրութիւն պէտք է դարձնել նրա վրա։

—

Երկուշաբթի, յունիսի 20-ին, Թիֆլիսի Ժողովարանի դահլիճում ճաշ տրվեց ի պատիւ հաղորդակցութեան ճանապարհների կովկասեան շրջանի վարչութեան գլխաւոր Բ. Ի. Ստասկովսկու յիսնամեայ գործունէութեան։ Ճաշին ներկայ էին Կովկասեան վարչութեան բարձրաստիճան անձինք, յօբելեարի պաշտօնակիցները և ծանօթները։ Դահլիճը, ուր տեղի ունեցաւ ճաշը, և առասարակ Ժողովարանի ամբողջ շինութիւնը զարդարված էին կանաչով։ Յօբելեարը չնորհաւորական հեռագիրներ ստացաւ Միխայիլ Նիկոլայևիչ և Նիկոլայ Միխայլովիչ Մեծ Իշխաններից, հաղորդակցութեան ճանապարհների մինիստրից և ուրիշ բարձրաստիճան անձինքներից։

—

Երկուշաբթի, ամսիս 20 ին, Թիֆլիսի արքունական թատրոնում կայացաւ տիկին Սավինայի բենեֆիսը։ Թէ «Պանդոկապետուհի» (La Locandiera)

ւաման, վանդաւոր.—բայց ոչինչ դուրս չեկաւ։ Նոյն ժողովուրդը, առանց կորցնելու իր հաւատը, առանց ատանելու, եկեղեցի գնաց և իր քուէներով վերջին ապտակը տուեց մեր հակառակորդներին։

Եւ ինչպէս չը տար այդ ապտակը։

Չէ՞ որ այդ նոյն մարդիկ երբէք ժողովուրդ չեն ճանաչել, միշտ հայհոյել են ընտրողներին, ամբոխը, ամենալիրը, ամենաանպատկառ խօսքերով։ Այդ բաւական չէ. այդ նոյն մարդիկ, դեռ սրանից մի քանի օր առաջ քարոզում էին, որ եթէ հարկաւոր լինի, Կաթողիկոսը անտես կառնի ժողովրդի ձայնը, կը քանդի ժողովրդական ընտրութիւնը, ոտի տակ կը տայ Ներսիսեան դպրոցի կանոնադրութիւնը, և ինքը կանի իր կարգադրութիւնները, ինքը կը նշանակի հոգաբարձուներ...

Այդ էլ հերիք չէ։ Ծխականները եկեղեցի են գալիս, ուզում են մասնակցել ընտրութեան, և փոխանակ ուրախանալու այդ բանից, քահանաները ասում են նրանց. «Դուք ծուխ չէք. դուք իրաւունք չունէք մասնակցելու»։

—Ինչպէս թէ ծուխ չեմ,—ասում է զարմացած ծխականը. դու չէ՞իր, տէրտէր, որ երէկ իմ որդուն մկրտեցիր, իմ եղբօր պսակը կատարեցիր, մեր տունը օրհնեցիր։

—Զը գիտեմ, չեմ յիշում,—ասում է քահանան և փակում եկեղեցու դռները ընտրողի առաջ։

Եւ ինչու էք կարծում, որ այդ բոլորից յետոյ ժողովուրդը կը սիրի քահանաներին, կը լսի նրանց ձայնը, կը հետևի նրանց խորհուրդներին։

Երբէք։

Եւ ահա տարիների ընթացքում կտրված լինելով ժողովրդից, և միայն նրա ատելութիւնը ու արհամարհանքը վայելելով, այդ մարդիկ այսօր զարմանում են, թէ ինչու ժողովուրդը իրանց սնացրեց, ինչու իրանց չընտրեց։

—

Սակայն դռնէ դրանով բուսականանային։ Գոնէ ժողովրդի ապտակը ստանալուց յետոյ լռէին։ Չէ. այժմ էլ ուզում են հաւատացնել, որ ընտրութիւնները կանոնաւոր չեն, որ ամեն բան եղել է անկանոն, անկարգ։

Սուտ է։ Նոյն իսկ քահանաները խոստովանում են, որ երբէք ժողովուրդը այնպէս կարգապահ չէ եղել, ինչպէս այս անգամ։

Բայց եթէ մի քանի տեղերում անկարգութիւններ են եղել, ո՞վ է մեղաւորը.—նախագահող քահանաները։

Ահա ձեզ փաստեր։—Ս. Նշան եկեղեցում ծխականները կամենում են որոշել, թէ արդեօք ընտրութիւնը թերթիկներով լինի, թէ տուփերով, մի իրաւունք, որ նոյն իսկ «Կանոնքով» ժողովին է պատկանում. քահանան դիմադրում է, անկարգութիւններ առաջ բերում և առիթ տալիս ժողովի փակման։ Ի՞նչ կասէք։

Մի այլ տեղ, Զրկինեանց եկեղեցում, ժողովականները բողոքում են և դուրս գալիս, էլի քահանայի պատճառով։ Որովհետև այդ քահանան չէր բարեհաճել բոլոր ծխականներին հրաւիրել և եկածներին էլ չէր ուզում ներս թողնել, ընտրող ճանաչել։ Եւ նախագահող քահանայի անկանոն արարքները այնքան առաջ են գնացել, որ նոյն իսկ ընտրված մի պատգամաւոր, Գրիգոր Իզմիրեան, բողոքել է ընտրութեան դէմ, յայտնելով, որ այդ անկանոն ընտրութիւն է, և ինքը չէ կամենում ընտրված լինել մի այդպիսի ժողովում։ Ի՞նչ կասէք։

Մի ուրիշ եկեղեցում, Էջմիածնեցոց եկեղեցում, նախագահ քահանան իրան թոյլ է տուել, ժողովի կիսում, փախչել ժողովից, փոքձել է այրել թերթիկները, առանց որ և է պատճառի, առանց որ և է հիման, միայն նրա համար, որ նկատել է, թէ իրան անցանկալի մարդիկ են ընտրվում։ Ի՞նչ կասէք։

Վերջապէս, Լուսաւորչի եկեղեցում, որտեղ ընտրողների մի մասը բողոքել և դուրս է գնացել,—էլի պատճառը քահանան է. բանից դուրս է գալիս, որ 20 նոր մարդիկ են եկել իրրև ծխականներ, մեծ մասը անչափահաս. այդ բաւական չէ. բուն ծխականների տեղ ներկայացել են օտար, պատրաստած (подставное) մարդիկ.—ծխականները բողոքել են այդ դեղծումների, այդ աներելի անկարգութեան դէմ և դուրս գնացել։ Փառք Աստուծոյ. փաստերը և գոկումենտները կան։

Թող քննեն, կը տեսնեն։

Ի՞նչ կասէք։

—

Բացի այդ չորս եկեղեցիներից, այն է՝ Զրկինեանց, Ս. Նշան, Էջմիածնեցոց և Լուսաւորիչ, բոլոր եկեղեցիների ընտրութիւնները կատարվել, վերջացել են, և կատարվել են կանոնաւոր կերպով։ Բողոք յայտնող չէ եղել, իրանք նախագահող քահանաները ոչինչ անկանոն բան չեն դտել ժողովի ժամանակ, արձանագրութիւն են կազմել, ստորագրել, ընտրութիւնը վերջացած համարել,—և ահա այժմ, երբ տեսնում են, որ ջարդված են և սնացած, աշխատում են մտքերը պղտորել, օյինները հանել, ընտրութիւնները քանդել տալ...

Այդ մարդկանց աներեսութիւնը հասել է այնտեղ, որ տպագրում են միայն այն եկեղեցիների ցուցակը, որտեղ կամ իրանց մարդիկ են ընտրված, կամ դռնէ երեքից մէկը իրանց մարդն է, և չեն տպագրում միւս եկեղեցիների ցուցակները։ Այդ բաւական չէ. այնքան խայտառակութեան են հասել, որ Վերայի, Ս. Սարգսի և Զորաբաշու եկեղեցիների պատգամաւորների մէջ դնում են այնպիսի մարդկանց անուններ, որ բոլորովին չեն ընտրված...

Մի խօսքով, մի կատարեալ օյինբազութիւն...

—

Ընտրութիւններից առաջ երկու կուսակցութիւններն էլ տպագրել էին թեկնածուների ցուցակներ, որ բաժանվում էին ընտրողներին՝ ագիտացիայի համար։

19 եկեղեցիներում, որտեղ ընտրութիւնները կատարվել են կանոնաւոր կերպով և բողոքներ չեն եղել, մեր կուսակցութեան ցուցակից անցել է 39 մարդ, իսկ հակառակորդների ցուցակից միմիայն 17 մարդ.—մի կատարեալ, մի փառաւոր յաղթութիւն։

Եւ ահա, չը կարողանալով տանել այդ յաղթութիւնը, չը կարողանալով դիմանալ այդ պարտութեանը, որ կրեց եղուիտների բանակը, սկսել են հայհոյել,—հայհոյել և ժողովրդին, և նախագահ-քահանաներին, և «Կանոնքը». սկսել են յարձակվել և առաջնորդի վրա, և ամառվայ եղանակի վրա, և հայոց աղքի ծագման վրա, և եւրոպական լուսաւորութեան վրա...

Այդ հերիք չէ. սկսել են առաջնորդարանի բերան հանդիսանալ և ակնարկութիւններ անել, որ այս ինչ եկեղեցու ընտրութիւնը պէտք է քանդվի, այն ինչը արդէն քանդված է, և այլն և այլն։

Երկու եկեղեցում ընտրութիւն չէ եղել, երկու եկեղեցում էլ բողոք։ Այդ չորս եկեղեցիներում նոր ընտրութիւններ պէտք է նշանակվեն և անկասկած առաջնորդը կը նշանակէ նոր ընտրութիւններ...

Միւս եկեղեցիներում ընտրութիւններ քանդել՝ կը նշանակէ ծաղրել ժողովրդին։

Ժողովրդական իրաւունքի և արդարութեան տեսակէտից է, որ մենք ասում ենք, թէ ընտրութիւնները չը պէտք է քանդվեն։

Ապա թէ ոչ, կասէինք. «Քանդեցէք բոլոր ընտրութիւնները, նորից նշանակեցէք, և կը տեսնէք, որ էլի կը սեանաք, և այն էլ կրկնապատիկ ձայներով։»

Ժողովրդի հետ հանաք մի արէք։

*

և թէ մանաւանդ «Ժենիա» պիւներում Սավինան խաղաց մեծ տաղանդով։ «Ժենիա» պիեսում նա ներկայացնում է մի հասակաւոր օրիորդի, որին մայրը դրդում է զբաղվել մարդու գնալու հոգսերով։ Օրիորդը իր երկու փեսացուներից, որոնցից մէկը ջահել, գեղեցիկ և բիտասարդ է, իսկ միւսը ծեր գեներալ, ընտրում է վերջինին այն պատճառով, որ սա հարուստ է և դիրքով մի անձն։ Սավինան կատարում է օրիորդի դերը այնքան բնական կերպով, որ մարդ մոռանում է, թէ բեմի վրա է տեսնում ներկայացրած անձին։ Պէտք է ասել, որ Սավինան յաճախ դատարկ, լրջութիւնից զուրկ պիեսներում է հանդէս գալիս։ Հասարակութիւնը տաղանդաւոր դերասաններից սպասում է, որ նրանք չարժէին հոգեկան քնքոյշ լարերը։ Եթէ տաղանդներն էլ այդ գործը թողնեն, այլ ես ով պէտք է այդ պակասը լրացնի։

—

Պարսկաստանի Ռաշտ քաղաքից, յունիսի 8-ից, մեզ գրում են. «Հասարակութիւնը անհամբեր սպասում էր ուսումնական տարվայ վախճանին, որպէս զի կարող լինէր տեսնել Ներաբաց «Խրիմեան» օրիորդական վարժարանի առաջին տարում ցոյց տուած առաջադիմութիւնը, քննութիւնների ժամանակ։ Մայիսի 30-ից սկսվեցին երկսեռ դպրոցների քննութիւնները, և վերջացան յունիսի 4-ին, և երեաց մեծ առաջադիմութիւն երկու դպրոցներում։ Կիրակի, ամսոյ 5-ին, կատարվեց տարեկան ակտ և ապա առաջին տարվայ աշակերտուհիների ձեռագործների վիճակահանութիւնը։ Հանդիսին ներկայ էին մեծ մասամբ տիկիններ, իսկ տղամարդիկ շատ քիչ։ Վիճակահանութեան արդիւնքը յատկացրած էր դպրոցին։ Վիճակահանութեան ժամանակ շատերը փոխանակ կարգ պահպանելու, խանգարեցին ընդհանուր կարգապահութիւնը և առաջ բերեցին մի անտեղի իրարանցում։ Այդ պատճառով մօտ 10 թումանի տոմսակ անհետացաւ, որ պատիւ չէ բերում։ Վիճակահանութիւնից մուտք եղաւ մօտ 400 ղուռն, իսկ ծախս 253 ղուռն»։

—

Մեր խմբագրութեան մէջ ստացված էր Երևանցի Տիգրան Մուրադեանից 21 ռուբլի, յօգուտ Բաֆայէլ Պատկանեանի ընտանիքի։ Այդ փողը մենք, այսօր, յունիսի 23-ին, ուղարկեցինք Նոր-Նախիջևան, տիկին Պատկանեանին։ Օգուտ ենք քաղում դէպքից նորից յայտնելու, որ մեր խմբագրութեան մէջ այդ նպատակով այլ ևս նուէրներ չեն ընդունվում։

—

Մեր լրագրի անցեալ համարում ապագրած ցուցակում չէին մտցրած Զուղուրեթի եկեղեցու պատգամաւորների անունները, մեզ յայտնի չը լինելու պատճառով։ Այդ եկեղեցում, ինչպէս մեզ հաղորդում են, ընտրված են՝ Ղազարեան, Տէր-Իսրայէլեան, Բաջինեան։

—

Մեր խմբագրութեան մէջ ստացվեց Սենկեվիչի մի փոքր գրքոյկի հայերէն թարգմանութիւնը «Եանկո երաժիշտը» վերնագրով։ Դա խարկովի հայ ուսանողների երկրորդ հրատարակութիւնն է, ժողովրդական ընթերցանութեան համար, և արժէ 2 կոպէկ։

—

Կիրակի, յունիսի 19-ին, կայացաւ Թիֆլիսի քաղաքային կրէդիտային ընկերութեան լիազօրների ընդհանուր ժողովը, Դ. Կօրգանովի նախագահութեամբ, մի քանի պաշտօնական անձինք ընտրելու համար։ Վերաստուգող յանձնաժողովի անդամներ ընտրվեցին՝ Ն. Մասալսկի, Ե. Տէր-Ա.կոպով և Ա. Բուդդանով-Բաղդասարով։ Վերահսկող մասնաժողովի անդամներ ընտրվեցին՝ Խ. Վէրմիշով և Կ. Ալիխանով։

—

Հաղորդակցութեան ճանապարհների և ֆինանսների մինիսարութիւնների մէջ, որպէս լսել է «Нов. Обозрѣніе» լրագիրը, նախագծվում է մի երկաթուղիական գիծ՝ Կովկասեան լեռնաշղթայի վրայով՝ Հիւսիսային Կովկասը Անդրկովկասի հետ միացնելու համար։

—

Պորտուգալիական կառավարութիւնը վերացրեց իր կարգադրութիւնը՝ Ռիգա քաղաքը խօլերայից վարակված համարելու մասին, և վերոյիշեալ նաւահանգիստը կասկածելի յայտարարեց։ Գալիցիայում, մինչև մայիսի 29-ը խօլերայով հիւանդներ կային 2. մայիսի 29-ից մինչև յունիսի 4-ը հիւանդացան 35, մեռան 19, ընդամենը էպիդէմիայի սկզբից հիւանդացել են 109, մեռել են 61 հոգի։ Սամուշինում, Բուկովինայում, մայիսի 26-ից մինչև յունիսի 5-ը հիւանդացել են խօլերայով 2 հոգի։ Սիմասի վիլայէտում, ասիական Թիւրքիայում, մայիսի 27-ից մինչև 30-ը խօլերայից հիւանդացան 20, մեռան 10։ Իսկէլինում մայիսի 30-ին հիւանդացան 4, մեռան 2. Սամսունում նոյն թուին հիւանդացան 3, մեռան 3, Եոզղատում յունիսի 30-ին և 31-ին հիւանդացան 22, մեռան 5. Կիր Շէխիում հիւանդացան 10, մեռան 8 հոգի։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՒՐՕՊԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ ԿԱՐՆՕԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

—

Ֆրանսիական հանրապետութեան նախագահ Կարնօի սպանման լուրը ահագին տպաւորութիւն գործեց ամբողջ Եւրոպայում թէ հասարակական կարծիքի, թէ կառավարութիւնների և թէ ամբողջ ժողովրդի վրա։ Ամենքն էլ շտապեցին իրանց ցաւակցութիւնը յայտնել և իրանց յարգանքը ցոյց տալ այն մարդու յիշատակին, որը ամբողջ վեց և կէս տարի ամենայն ազնուութեամբ կատարեց եւրոպական մի մեծ պետութեան դեկավարի դերը։ Այդ ազնիւ գործունէութեան հնարիւ էր, որ Ֆրանսիան, թէ իր արտաքին քաղաքականութեան մէջ, և թէ իր ներքին գործերում յաղթող հանդիսացաւ և իր պատշաճաւոր տեղը գրաւեց եւրոպական պետութիւնների շարքում։

Եւրոպան և եւրոպական հասարակական կարծիքը գիտէին և գնահատում էին հանգուցեալ Կարնօի այդ արժանաւորութիւնները, և այդ պատճառով էլ այդ զարհուրելի սպանութեան տպաւորութիւնը մեծ էր և սարսափեցնող։

Ամենից առաջ Եւրոպայի թագաւորները և պետական մարդիկ շտապեցին իրանց ցաւակցութիւնը յայտնել հանգուցեալի ընտանիքին և Ֆրանսիական ազգին՝ մի այդպիսի զգալի կորուստի համար։ Ռուսաց կայսրը, աւստրիական և գերմանական կայսրները, իտալական և բէլգիական թագաւորներն ու ուրիշները շտապեցին իրանց խորին վիշտը և ցաւակցութիւնը յայտնել Ֆրանսիական ազգին՝ այդ վայրենի սպանութեան համար։

Մանաւանդ յուսահատեցնող տպաւորութիւն գործեց Կարնօի սպանութեան լուրը Իտալիայի հասարակական կարծիքի վրա։ Հէնց որ ստացվեց Կարնօի սպանութեան լուրը Հռոմում, կառավարութեան հրամանով, բոլոր հասարակական շինութիւնների վրա սգադրօշակներ պարզվեցին։ Պարիզ ուղարկվեցին բազմաթիւ հեռագիրներ թագաւորի, պապի, Կրիսպիի և կառավարութեան կողմից։ Պատգամաւորների ժողովի նիստում նախագահը, մինիստրները և պատգամաւորները վերկացան, երբ Կրիսպի յուզված ձայնով ասաց. «Հեռագիրը բերեց տխուր լուր Ֆրանսիական հանրապետութեան նախագահ Սադի Կարնօի սպանութեան մասին։ Կարնօ սերունդ էր այն մարդկանց, որոնք փառաւոր կերպով ծառայել են իրանց հայրենիքին, մի ազնիւ մարդ, որը չէր կարող թշնամիներ ունենալ. նա չէր կարող ատելութեան զգացմունքներ յարուցանել։ Նա զոհ գնաց մի մարդասպանի դաշոյնի հարուածին, որը, ի մեծ դժբաղդութիւն մեր, Իտալիայի բնակիչ է. բայց մեզ մասամբ կարող է մխիթարել այն փաստը, որ անարխիստները հայրենիք չունեն։ Եթէ նրանք հրաժարվում են հայրենիքից, հայրենիքն ևս հրաժարվում է նրանցից։ Պատգամաւորների ժողովը, որպէս ազգի ներկայացուցիչ, վշտակից է Ֆրանսիային և նրա հետ միասին կողբայ նրա դառն կորուստը։» Ապա Կրիսպի առաջարկեց փակել նիստը։ Նոյն բանը տեղի ունեցաւ և սենատում։

Անգլիական ամբողջ մամուլը իր զայրոյթը և ցաւակցութիւնն է յայտնում Լիսնում տեղի ունեցած սպանութեան առիթով։ «Times» լրագիրն ասում է, որ Կարնօի մահը Ֆրանսիայի համար ծանր, մինչև անգամ անփոխարինելի կորուստ է։ Լորդ Կիմբերլէյ պատուիրեց Պարիզի անգլիական դեսպանին՝ թագուհու կողմից յայտնել այն սարսափելի զգացմունքը, որ տիրեց Անգլիական ազգին՝ այդ լուրը ստանալու ժամանակ։

Աւստրիական մայրաքաղաքում ևս Կարնօի սպանութեան լուրը սարսափահար արեց բոլորին։ Բոլոր լրագիրները պահանջում են ամենախիստ միջոցներ անարխիական խելագարութեան դէմ։ Ունգարական պատգամաւորների ժողովը վճռեց յայտնել այն խորին վիշտը, որ ունգարական ազգը բաժանում է ֆրանսիական ժողովրդի հետ։ Աւստրիական կայսրը և կայսրուհին ցաւակցական հեռագիրներ ուղարկեցին տիկին Կարնօին։

Գերմանական կայսրը նոյնպէս տիկին Կարնօին մի հեռագիր ուղարկեց, որի մէջ յայտնում է իր և կայսրուհու ցաւակցութիւնը։ Հեռագիրը վերջանում է հետևեալ խօսքերով. «Թող օգնի ձեզ Աստուած տանել այդ հարուածը։ Արժանի իր մեծ անուան, Կարնօ, որպէս զինուոր, ընկաւ պատերազմի դաշտում։»

Աշխարհիս ամեն ծայրերից ստացվում են վշտակցութեան հեռագիրներ՝ Կարնօի սպանութեան առիթով։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐՔԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

—

Ալաշկերտից գրում են. «Վիճակիս առաջնորդը Զատկէն մէկ շաբաթ ետքը խօշաւ գիւղի վրա քահանայ մը ձեռնադրեց։ Ներընծան անուս է և քահանայութեան որ և է կերպով արժանիք չունի. գիւղացիներն ալ քահանայի պէտք չունէին, և իրենցմէ ոչ ոք քահանայ խնդրած էր։ Գիւղացիները պատրիարքարանի դիմեցին. յայտնի չէ, թէ ինչ պատասխան պիտի տրուի։ Գաւառացի առած մը լաւ ըսած է. «Երէց եղիր գիւղն ինկեր, երբոր չապրար գեան ինկեր»։

«Ամասիայէն գրուած է ի պատրիարքարան, թէ վիճակը բաւական ատենէ ի վեր անհովիւ կը մնայ, ուստի կը խնդրուի եկեղեցական մը ղրկել, վիճակային գործերը երեսի վրա չը ձգելու համար»։

«Առանայէն կը գրեն, թէ մէկ քանի գիւղերու մէջ նմանը չը տեսնուած խոշորութեամբ կարկուտ տեղացեր է, և բոլոր բերքերը, ցորեն ու բամբակ, ոչնչացեր են։ Քանի մը մեծամեծ ծառեր արմատախիլ եղեր են։ Առատական վիճակը կայուն է»։

«Այվալըքի կողմերը աւազակներու խումբեր երևան եկած ըլլալով, հրահանգ տրուեր է Այտընի կուսակալին, որպէս զի պէտք եղած խիստ հսկողութիւնը ի գործ դրուի և չարագործները հալածուին»։ Դատարկ հրահանգներ ոչինչ օգուտ չեն բերում։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԲԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, յունիսի 15-ին

Անցեալ շաբաթ Պոլսի բոլոր եկեղեցիներու աւագերէցները անստորագիր նամակներ կը ստանան, որոցմով աւագերէցներին կը հրամայուի պատարագի ատեն Աշըգեանի անունը չը յիշատակել, հակառակ պարագային կը սպառնան ըսպանել։

Նամակներու տպաւորութիւնը և թողած սարսափը ահագին էր։ Եկեղեցիներու ժամկոչները և քահանաները հարցաքննութեան ենթարկուեցան, իսկ ժամկոչներէն շատերը բանտարկուեցան։

Կառավարութիւնը նախապէս կանչեց բոլոր աւագերէցներն ու քարոզիչները և հրամայեց, որ յառաջիկայ կիրակի յիշեն Աշըգեանի անունը պատարագի ատեն, բայց բացարձակ մերժեցին, ըսելով որ մենք կը վախնանք, չենք կրնար յիշել, և ամեն սպառնալիք, խստութիւնք արդիւնք չունեցան։

Անցեալ կիրակի, ամսոյ 13-ին, շատ մը եկեղեցիներու մէջ պատարագը բոլորովին խափանուեցաւ, իսկ միւս եկեղեցիներու մէջ Աշըգեանի անունը չը յիշատակուեցաւ։ Բոլոր եկեղեցիներու գաւիթներու, դուռներու, մուտքերու առջև, եկեղեցիներու մէջ փոլիսներ, ծպտեալ ոստիկաններ և լրտեսներ կը վխտային։

Երէկ Բարձրագոյն Դուռնէն թեղքերէ մը գացած է Աշըգեանին, որովհետև կը հրամայուի իրեն անպայման և չուտափոյթ ստանձնել իր պաշտօնը։ Թէղքերի մէջ գրուած է, որ կայսեր կամաց միանգամայն հակառակ է իր հրաժարականը և կը հրամայէ որ ընդփոյթ իր գործի գլուխը անցնի։ Իսկ այսօր բոլոր աւագերէցներուն հրաման պիտի ուղարկվի կառավարութենէն, որ յառաջիկայ կիրակի, ըստ նախնի սովորութեան, յիշատակուի Աշըգեանի անունը։

Սուլթանը Նազըմ-բէյը յանդիմանած է, որը իր վերջին տեղեկագրի մէջ յայտարարած էր, թէ Աշըգեանի դէմ արած փորձը անհատական էր, իսկ Սիմոն-բէյի սպանութեան փորձը նոյնպէս, որովհետև հաստատապէս համոզված է, որ Պոլսի մէջ որ և է յեղափոխական կազմակերպութիւն չը կայ։ Անստորագիր նամակները հերքել են Նազըմ-բէյի տեղեկագիրը և կայսրը հրամայեց, որ Նազըմ-բէյի փաշայութեան իրաղէն չը կարդացուի, մինչև յեղափոխական շարժումներու խնդրի լուծումը։

Եթէ յեղափոխականներ չը ձերբակալուին (ցարդ չեն ձերբակալուած) և որ և է նոր դէպք պատահի, Նազըմ-բէյի անկումը անխուսափելի է։ Նազըմ-բէյ այս շատ լաւ գիտէ և հզօր ճիգեր, ջանքեր կընէ, եթէ ոչ ձերբակալել, գոնէ որ և է նոր դէպքերու առջևը առնել, նոր դէպքերը արգելել, որմէ կախեալ է իր պաշտօնի վրա մնալ չը մնալը։

Խ—րով

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Ղազուին, յունիսի 2-ին

Համեմատելով Պարսկաստանի միւս քաղաքների հետ, Ղազուինի կողմերում աւազակութեան շատ դէպքեր են պատահում։ Արդէն անցեալ տարվանից մի քանի անգամ յարձակում են գործել կառավարչական պօստի վրա, կողոպտել են մի քանի ճանապարհորդներ և մի հայ վաճառական, որից տարել էին 500 թուման։

Ներերս Զանջանի քաղաքապետի հսկողութեան ներքոյ ձերբակալվեցան մի խումբ աւազակներ, որոնց և պէտք է գլխատման ենթարկէին այսքանի օրերս։ Այստեղի կրօնապետը աչխատանք էր գործ դնում, որ կարողանայ մահապարտների արիւնը գնել, այսինքն մի քանակ փող վճարելով չը թողնել, որ նրանց գլխատեն, այլ դրա փոխարէն ականջը կամ քիթը կտրեն։ Քաղաքապետը հրամայում է բռնել մի գայլ, կտրել է տալիս նրա ոտները, կանչում է կրօնապետին և նրա ներկայութեամբ հրամայում է՝ գայլին դցել մի սենեակ և մօտը դցել մի գառը, ապա կրօնապետին հրամայում է փակել իր ձեռքով դուռը և կնքել իր կնիքով։ Մի քանի օրից յետոյ կանչում է դարձեալ կրօնապետին, և նրա ներկայութեամբ հրամայում է բանալ դուռը և ցոյց տալ կրօնապետին, թէ ինչ է արել ոտքը կտրած գայլը. ինչ ասել կուզի, որ նա կերել էր գառը։ Ապա դառնալով կրօնապետին, քաղաքապետն ասում է. «Ահա թէ ինչ կանեն աւազակներ, երբ միայն ոտքը կամ քիթը կտրելով բաց թողնենք. և դուք, մի կրօնաւոր մարդ, ինչպէս կարող էք այսպիսի գայլերին համար երաշխաւորել. աւելի լաւ է կրօնաւորութիւնդ չարունակես»։ Ահա թէ ինչ օրինակով ամաչեցնում է կրօնապետին Ամիր-խան-Սարդար քաղաքապետը։

Աւազակների գլխատման վճիռը եղած է, և շուտով ի կատար կածվի։

Ա.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Հօն-Կոնգում, Պէկինի ռուսաց դեսպանի հաղորդած տեղեկութեան համեմատ, յունիսի 5-ին ժանտախտից հիւանդացան 36, մեռան քաղաքում 18, հիւանդանոցում 21։ Յունիսի 6-ին հիւանդացան 27, մեռան քաղաքում 10, հիւանդանոցում 22։ Յունիսի 7-ին հիւանդացան 56, մեռան քաղաքում 15, հիւանդանոցում 21 հոգի։

—Անգլիական իշխանութեան հաղորդած տեղեկութիւնների համեմատ, մայիսի 25-ից մինչև յունիսի 12 (նոր տօմարով) ժանտախտից մեռել են Հօն-Կոնգում 1500 մարդ։ Վարակված թաղերը ախտահանվում են տաժանակիր աշխատանքներին դատապարտվածների ձեռքով։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Նիւ-Եօրկում հրատարակվող լրագիրներից մէկի յանձնարարութեամբ, Պիէր Լօտի յանձն առաւ ճանապարհորդել Փոքր-Ասիայում և Պալեստինում։ Ճանապարհորդութեան ծախսերը վճարում է նոյն լրագրի հրատարակիչը։ Ճանապարհորդութեան նկարագրութեան համար Լօտի կը ստանայ 50,000 ֆրանկ, բայց հեղինակը առանձին գիրք հրատարակելու և օտար լեզուներով թարգմանելու իրաւունքը վերապահում է իրան։ Անգլիական լրագիրները այդ առիթով ասում են, որ Լօտիի տարեկան եկամուտը իր գրուածքներից հասնում է չորսից մինչև հինգ հազար ֆունտ ստերլինգի, այսինքն մօտ 45 հազար ռուբլու։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԱՐԻԶ, 20 յունիսի։ Կիրակի։ Անսովոր խուռն ամբոխ կանգնած է պատկառանքով. սարսափելի շոք է. փողոցների երկարութեամբ զրված են սանդուղներ և կառքեր են կանգնած, որոնց տեղերը չափազանց բարձր գներով են ծախվում։ Ժամը 10-ին երևում է Պէրիէ. նրան դիմաւորում է ամբողջ գեներալիտէտը։ 10 ժամ 15 րօպէին Սօսիէ բաց է անում հանդիսաւոր ընթացքը. հանդիսի գլուխ անցած՝ գնում է հանրապետական զվարդիան. զվարդիայի ետևից տանում էին պսակ Պէրիէի կողմից, ապա գնում էին հոգևորականութեան կառքերը և սգակառքը՝ վեց ձի լծած. դագաղը ծածկված է երեք գոյնի դրօշակով. հանդիսաւոր յուղարկաւորութեան ճանապարհի վրա ոչինչ ծաղիկներ չը կային. սգակառքին հետևում էին օֆիցերները կարնօի շքանշաններով և հանդուցեալի երեք որդիք. ընտանեքի անդամների ետևից գնում էին՝ հանրապետութեան նախագահը բաց գլխով, սենատի և պատգամաւորների ժողովների նախագահները, դիպլոմատիական կօրպուսի անդամները, մինիստրները, պատգամաւորները, գեներալները, զանազան վարչութիւնների ներկայացուցիչները և այլն։ Յուղարկաւորութեան հանդէսը մօտ կէսօրին մատեցաւ Notre Dame տաճարին, որտեղից շարունակվեց 2 ժամից յետոյ. Notre Dame տաճարի մօտ յուղարկաւորութեան դիմաւորումը հանդիսաւոր էր։ Գեներալ Սօսիէ գլխաւոր շտաբի հետ կանգնեց մուտքի ձախակողմը։ Երբ սգակառքը մօտեցաւ, Սօսիէ և օֆիցերները սրերը մերկացնելով ողջունեցին և այդ ժամանակ տեղի ունեցաւ փողհարութիւն, թմբկահարութիւն և զանգահարութիւն։ Աբբեպիսկոպոսը, շրջապատված ամբողջ հոգևորականութեամբ, ընդունեց ամիւնը գլխաւոր մուտքի մօտ։ Ամբողջ տաճարի պատերին սև մահուդ է կպցրած։ Երբ դագաղը իջեցրին դամբարանը, հանդիսախումբը հեռացաւ կատարեալ կարգապահութեամբ. ամբոխը ցրվեց։ Յուղարկաւորութեան ժամանակ միմեանց հրելուց և շքից՝ վնասվեցին մի քանի հարիւր մարդիկ։—Այսօր առաւօտեան Պարիզում կալանաւորեցին մօտ 200 անարխիստներին իրանց բնակարաններում։

ՇԱՆԽԱՅ, 20 յունիսի։ Փոխարքան կարգադրեց Կօրէյա ուղարկել չինական զօրքերի 200 վաշտ, որովհետև այլ ևս յոյս չը կայ, որ խաղաղ կերպով լուծվեն Եապօնիայի հետ ունեցած դժուարութիւնները։

ՀՌՕՄ, 20 յունիսի։ Լիվօրնեան „Gazeta Livornesse„ և „Telegrafo„ լրագրների խմբագիրը, Բանդո, որը կարնօի սպանութեան առիթով գրում էր անարխիստների դէմ, դաշոյնով սպանվեց այսօր առաւօտեան Լիվօրնօում, երբ գնում էր կառքով, նոյն հանգամանքներում և նոյն կերպ, որպէս կարնօն, որը և Բանդո ինքն վկայեց իր մահից առաջ։

ՇԱՆԽԱՅ, 20 յունիսի։ Եապօնիան շարունակում է զինաւորվել ընդարձակ չափերով և պահանջեց Կօրէյայի թագաւորից, որ նա հրաժարվի Չինաստանի հովանաւորութիւնից, ընդունի Եապօնիայի հովանաւորութիւնը և հեռացնի չինական ներկայացուցչին։ Սէուլում կանգնած է 3000 հոգուց բաղկացած եապօնեան զօրք։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 յունիսի։ Յունիսի 8-ից մինչև 17-ը Կրօնշտատի ծովային հիւանդանոցը մտան 19 հիւանդներ խօլերային նշաններով. նրանց կղզանքը հետազօտելու ժամանակ 17 հիւանդների մօտ գտնվեցին կօխի ստորակէտանման բացիներ, որոնց, ծովային խոզերի վրա պատաստելու ժամանակ, զրական հետևանքներ տուին։ Յունիսի 17-ից մինչև 18-ը կրկին հիւանդացան 7 և մեռան 3 հոգի։

ՄԱԴՐԻԴ, 21 յունիսի։ Մի ինչ որ բանւոր աշխատում էր սպանել մարկիզ Կիւբասին, որը հռօմում ուխտագնացութիւն կատարող սպանիական բանւորների գլուխ էր կանգնած։ Կիւբաս անվնաս մնաց։ Այն ժամանակ, երբ մարկիզը քննում էր Մադրիդի մայր-եկեղեցում կատարվող աշխատանքները, դաշոյնի հարուածով ծանր վիրաւորվեց մի բանւոր, որը կարեց մարդասպանի ճանապարհը։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Յունիսի 21-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ . .	93 ր.	20 կ
Բերլին վրա 100 մարկ — . .	45 ր.	60 »
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	36 »	92½ »
Ոսկի — — արժէ . .	7 »	51 »
Մաքսային կուպօններ — . .	150 »	— »
Արծաթ — — — . .	— »	— »
Բօրսային դիսկօնտ — . .	5 »	7 »
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի .	— »	— »
— — — — 2-րդ .	— »	— »
— — — — 3-րդ . .	— »	— »
5% ոսկեայ բէնտա 1884 թ. . . .	146 »	50 »
4½ ոսկեայ փոխառութիւն. . . .	— »	— »
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	— »	— »
— — — 2-րդ —	— »	— »
— — — 3-րդ —	— »	— »
— — — 4-րդ —	— »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	— »	— »
— — երկրորդ —	224 »	50 »
Պետական երկաթուղային բէնտա.	102 »	50 »
4½ բէնտա	— »	— »
4% ներքին փոխառութեան . . .	96 »	50 »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	— »	— »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ.		
Գրաւ. թղթ. — — .	— »	— »
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի.	100⅞ »	— »
4½% գրաւական թղթեր կալուած.		
Պետրոս. կրեդիտ. ընկեր. մնաց. .	154 »	25 »
— — — թղթադ. .	— »	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.		
ընկերութեան օբլիգացիաները.	101 »	50 »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	101⅜ »	— »
Օդէսայի — —	— »	— »
Թիֆլիսի — —	— »	— »
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	— »	— »
— — Ռոստովի — .	— »	— »

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը խաղաղ է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՆՆԵՐ

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ

Որ ունի 5 դ. կարգի իրաւունք և երեք տարի պարապել է ուսուցչութեամբ, ցանկանում է հայոց ծխական դպրոցներում ունենալ ուսուցչի պաշտօն Ռուսաց լեզուից և թուաբանութիւնից։

Ցանկացողները կարող են դիմել հետևեալ հասցէով՝ Астрахань, въ Армянское Агабабовское училище, учителю Вардану Аветовичу Шелковникову. (ամ. 2) (№ 67) 5 - 5

ԱՄԵՆԱՅԱՅՏՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ



ՐՕՅԱԼՆԵՐ

ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

ՖԻՍ-ՀԱՐՄՕՆԻՈՒՄՆԵՐ, ՋՈՒԹԱԿՆԵՐ։ ԿԻԹԱՌՆԵՐ, ՖԼԷՅՏԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՁԱՅՆԱԽԱՁԵՐ, ԼԱՐԵՐ ԵՒ ԱՅԼՆ, ԵՒ ԱՅԼՆ։

Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս-մաս։

ՆՈՐ-ՊՐԷՅՍԿՈՒՐԱՆՏՆ
ուղարկվում է ձրի։
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՁԱՅՆԱԽԱՁԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ-ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ

ԴԷՊՕ

Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

Մատակարար Կայսերական Երաժշտական Ընկերութեան

Тифлисъ, Музыкальное депо Б. М. Мириманіана, Дворцовая ул., д. Т. Д. З. Банка.

(№ 35) 7—20

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Մ. ԴԷ-ԼԱ-ՖԱՐ ԵՒ ԸՆԿ.

կատարում է հետևեալ օպէրացիաները.
1) Տոկոսաբեր թղթերի ապահովութեամբ՝ փոխառութիւն.
2) I, II, III խաղարկութեան տոմսակների վաճառումը, ԱՄՍԱԿԱՆ 5 ՐՈՒԲԼԻ ՎՃԱՐՈՒՄՈՎ.
3) Փոխանակագրեր է տալիս Ռուսաստանի զանազան քաղաքների վրա.
4) Ընդունում է ժամանակաւոր և մշտական աւանդներ.
5) Բաց է անում ընթացիկ հաշիւներ՝ չէկերով.
6) Ընդունում է in casso վեկսելներ և ուրիշ դոկումենտներ։

Լիազօր՝ Ս. Պ. ՊԱՎԼՈՎ. ԹԻՖԼԻՍ, Սէրգիևսկայա փողոց, № 1.
Գանձակումը գործակալն է՝ Նիկոլայ Կարամանովիչ Օհանէսով։
(№ 15) (հ.) 20—50

ԲԵՍԱՐԱԲԻԱՅԻ ՕՐՀԷՑ ՔԱՂԱՔԻ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ զուրկ լինելով ցայսօր մի կանոնաւոր եկեղեցուց (ժամասացութիւնը մինչև այսօր կատարվում է յատուկ այդ նպատակի համար յարմարեցրած մի խարխուլ տան մէջ), մտադիր է ընդհանուր ոյժերով մի վայելուչ, փոքրագիր եկեղեցի կառուցանել, որի իրագործման համար պէտք մտ 15,000 ր. գումարը արդէն սկսել է իր մէջ հաւաքել. այսպէս, օրինակ՝ Պալեօգեան եղբայրները՝ 1000 ր., Պարիս Պաղդասարեանը՝ 1000 ր., Պապովիչ Սարգիս՝ 1000 ր., այրի Եղիսաբէթ Զախարեան՝ 1000 ր., հանգուցեալ կատարինէ Դալդարի ժառանգներից՝ 1000 ր., Սարգիս Չէրքէզ՝ 500 ր., Նազարեան կատարինէ՝ 500 ր., Նազարեան Յարութիւն՝ 500 ր., Նազարեան Յովհաննէս՝ 500 ր., Նազարեան Գրիգոր՝ 500 ր., Նազարեան Յակով 500 ր., Ֆօքշանեան Խաչիկ՝ 500 ր., Ֆօքշանեան Հռիփսիմէ՝ 100 ր., և այլն։

Եւ որովհետև հարկաւոր գումարը լրացնելու համար պակասում է էլի մտ 7—8,000 ռուբլի, ուստի յիշեալ Թբքախօս հայ հասարակութիւնը դիմում է կովկասեան արիւնակից եղբայրների օգնութեանը, յուսալով և համոզված լինելով, որ Կովկասի դէպի բարեգործութիւնը միշտ զգայուն հայ հասարակութիւնը չի զլանայ իր լուման օտարաբնակ Թբքախօս եղբայրների այսպիսի մի կենսական կարիքը լրացնելու հարցում։

Նուիրատուութիւնները խնդրում են ուղարկել հետևեալ հասցէով.

Въ Оргѣевъ (Бесарабія). Г-жѣ Екатеринѣ Мартыновнѣ Назаровой.

Յողովարարութեան իրաւունքը ստացված է վիճակային Ատենից, որից ստացված է և ժապաւենեալ մատեան, ուր մուծվում են ցայսօր հաւաքված և հաւաքվելիք նուիրաբերութիւնները։

(№ 68) 2—3 Նորընծայ Մարտիրոս քահանայ Զատիկեանց

ԲԺԻՇԿ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍԵԱՆ
ՎԻԵՆՆԱ ՀԱՍՏԱՏՎԱԾ
Երգչաց և տաղանդի հիմնարկներին մի գրամ ալիւրի տարբերակ դեղ մի գրամ դեղ՝ հայկական դեղերի։ Հասցէ՝ Wahe Minassian. Dr. med. VIII Schlössel gasse, 10, Vienna. (№ 42) 5—5

24—25 (2) № 86

ԱՏԱՄՆԱԲՈՑԺ

Հ. Յ. ՕՐԲԷԼԻ

Սօլօլակսկայա փողոց, սեփական տանը №№ 15—16

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ

Առաւօտեան 8 ժամից մինչև 12 ժ. և երեկոյեան 4 ժամից մինչև 6 ժ.
Կիրակի և տօն օրերին առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ։

(№ 145) 149—150



ՄԻԶՈՑ ԽԱՐԲՈՒԽԻ ԴԷՄ

բժշկական դեպարտամենտից թոյլատրված

ՕԼՖԱԿՏՕՐԻՈՒՄ ՆՈՒԴԻԼԻՆ

Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿՈՒ

Ծախվում է 40 կոպէկով

Դեղագոյ ծական Ապրանքների վաճառման Կովկասեան Ընկերութեան մէջ Թիֆլիսում։

№ 128 (91 թ.) 24—40

ԴԵՂ ԱԳՈՐԾ Ա. Ս. ԱՐԻՍՏԱԿԵԱՆԻ ՊԱՀԵՍՏ ԵՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ դեղերի, մարթին գեղեցկացնող և հոտաւէտ, նոյնպէս և առողջապահական նիւթերի և տնտեսական գործիքների, բացված է Կուկիայում, Վօրոնցովի արձանի հանդէպ, բժշկապետ Նաւասարդեանի առաջին մասն. հիւանդանոցի տակ։

(№ 67) 83—100 (ե. շ.)

Дозволено цензурою, Тифлисъ, 22 Іюня 1894 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.